«Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում և Բեռլինի կոնգրեսում»թեմայի դասավանդումը դպրոցում

Ներկայացնող՝ Մարիամ Զաքարյան

Ներածություն

Աշխատանքս վերաբերում է 19-րդ դարի վերջին տեղի ունեցած երկու կարևոր իրադարձություններին,որոնք կարող էին որոշել մի ամբողջ ժողովրդի ճակատագիր։

Աշխատանքի նպատակն է ավելի խորը ուսումնասիրել Հայկական հարցի էությունն ու ներկայացնել,թե ինչ գործունեություն ծավալվեց Հայկական հարցի լուծման համար։Կարևոր է հիմնավոր ուսումնասիրության ենթարկել Սան Ստեֆանոյի պայմանագրի հոդվածները, Հայաստանին ու հայերին վերաբերող այնտեղ տեղ գտած հոդվածներն ու ձևակերպումները,զուգահեռներ անցկացնել Բեռլինի վեհաժողովի հետ և գնահատել դրանց պատմական դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում։Եվ ի վերջո,արդյո՞ք դասեր քաղեցինք այդ ամենից։

Առաջնային են հետևյալ խնդիրների շուրջ քննարկումներն ու մեկնաբանությունները։

1. 1870-ական թթ. կեսերի աշխարհաքաղաքական վիճակը։
2. Ինչու պատմությունը խաչաձևեց թուրքերի և հայերի ազգային շահերը։
3. Ինչու էր Արևմտյան Հայաստանում տեղի ունենում հայ բնակչության ծրագրավորված ոչնչացում։
4. Ինչ ազգային-քաղաքական բովանդակություն ունի Հայկական հարցը։
5. Որ գործոնները Հայկական հարցը միջազգայնացրին։
6. Ինչու Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը մնաց թղթի վրա և չիրագործվեց։

Թեմայի արդիականությունը։ Յուրաքանչյուր ժողովուրդ գոյատևելու և բնականոն կյանքով ապրելու համար պետք է ունենա իր ազատ և անկախ Հայրենիքը։

Հայրենիքը ժողովրդի պատմական ապրելատարածքն է։ Հայրենիքի գաղափարի ակունքները սկիզբ են առնում դարերի խորքում և ունեն պատմաէթնիկական բնույթ։ Ազատ Հայրենիքն ու անկախ պետականությունը այն հզոր գործոններն են,որոնք ապահովվում են ժողովուրդների բնականոն զարգացումը։

Այդ է պատճառը,որ պայքարը Հայրենիքի ու անկախ պետականության համար վերածվում է գոյատևման,կենաց ու մահվան կռվի։

Այդ պայքարի ճանապարհին ամեն մի ժողովուրդ անհրաժեշտորեն մշակում է իր ազգային գաղափարախոսությունը,որի հիմքում ընկած է Հայրենիքի,անկախ պետականության և ժողովրդի գոյատևման ու ազատ զարգացման գաղափարը։Ազգային գաղափարախոսությունը ազգի ողնաշարն է,ազգի ոգին։

Հրաժարվել Հայկական հարցից ու ազգային գաղափարախոսությունից,այդ նշանակում է հայ ժողովրդին դատապարտել անխուսափելի կործանման։

Թուրք և թուրքամետ պատմաբանները սիրում են կրկնել. «Օսմանյան պետության պատմության մեջ երբևիցե,այսպես ասած,ոչնչացում չի եղել»։Բայց չէ որ Օսմանյան

կայսրությունը ծնվեց հենց այդ միջոցներով՝ քաղաքակիրթ ժողովուրդներին կոտորելու ու բնաջնջելու միջոցով։ Չէ որ օսմանյան տիրակալները բնաջնջման քաղաքականություն իրականացրել են ոչ միայն հայերի,այլ նաև հույների, բուլղարների, արաբների,հրեաների և կայսրության մեջ բնակվող մյուս ժողովուրդների նկատմամբ։

Պատմությունը օրակարգ մտցրեց հայ ժողովրրդի լինել-չլինելու հարցը։

Ստեղծվել էր հզոր Օսմանյան կայսրությունը։Հայոց Հայրենիքը նվաճված էր թուրքերի կողմից։ Հայոց Հայրենիքը հռչակվել էր թուրքերի հայրենիք։Ձևավորվում էր Փոքր Ասիան և Հայկական լեռնաշխարհը նվաճած և այնտեղ նստակյաց կյանքի անցած թուրքական ցեղերի ազգային գաղափարախոսությունը,որի հիմնական նպատակը նվաճված տարածքներում թուրքական հայրենիքի ստեղծումն՝էր։Պետք է ոչնչացվեր հայ ժողովուրդը,կամ պետք է ձուլվեր ու արտագաղթեր,կամ էլ ֆիզիկապես ոչնչացվեր։

Այսպիսով,հանուն թուրք ժողովրդի նոր հայրենիքի ձեռքբերման,հանուն այդ տարածքում թուրքական ազգային պետականության ստեղծման,հանուն Մեծ Թուրանի համաթուրքական պետության ստեղծման պետք է ոչնչացվեր ամբողջ հայ ժողովուրդը և Հայաստանը։

Պատմությունը խաչաձևեց թուրքերի և հայերի ազգային շահերը։Հայոց պատմական հայրենիքում կամ թուրքերը պետք է կառուցեն իրենց ազգային պետականությունը,կամ էլ հայերը պետք է վերականգնեն իրենց կորցրած պետականությունը։Հայոց պատմական Հայրենիքում պետք է ապրեր մեկը՝ կամ հայը,կամ թուրքը։Երրորդ ուղղին թուրքերը բացառեցին։

Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանը նվաճվելուց հետո,երբ արևելահայության ֆիզիկական գոյությանը այլևս վտանգ չէր սպառնում,հայ ազատամարտի ղեկավարները եկան այն եզրակացության,որ հիմնական ուշադրությունը պետք է դաձնել Արևմտյան Հայաստանի ազատագրությանը,որտեղ հայկական բնակչության ծրագրավորված ոչնչացում էր տեղի ունենում։

Հայ ժողովուրդը ազատագրական պայքար է մղել ,մահու և կենաց կռվի ելել հռոմեական լեգեոնների (I դ. մ. թ. ա),պարսիկների (V), արաբների (VII - IX դդ.) դեմ։Նա վճռական դիմադրություն է ցույց տվել Բյուզանդական կայսրության հայահալած քաղաքականությանը, որի հետևանքով XIդ. վերացվեցին Տարոնի,Տայքի,Վասպուրականի,Անիի,Կարսի,հայկական թագավորությունները։Նաև Բյուզանդիայի հակահայկական ընթացքով պիտի բացատրել սելջուկների արշավանքների հաջողությունհը Փոքր Ասիայում և այնտեղ նրանց հաստատվելը։

Թաթար-մոնղոլական արշավանքները XIII դ. ահավոր ավերածության ենթարկեցին Հայաստանը։ 1236 թ. վերջ տրվեց Զաքարյանների իշխանությանը։ 1375թ. նույն ճակատագրին արժանացավ Կիլիկիայի հայկական թագավորությունը։Եգիպտական մամլուքները Սիսը գրավելուց հետո կործանեցին հայկական թագավորությունը։

1387 թ. Հայաստանն ընկավ Լենկթեմուրի բռնապետության տակ։ Թուրքական պետությունը ի սկզբանե հպատակ այլադավան ազգություններին իրեն ձուլելու քաղաքականություն էր վարում։Պատմությանը հայտնի է,որ մի շարք սուլթաններ քրիստոնյաներին սրի քաշելու որոշում են ընդունել։

Մի երկրում,որտեղ շարքային աստիճանավորից մինչև սուլթանը կաշառք էին վերցնում,որևէ օրինականության մասին չէր կարող խոսք լինել։

Հայկական հարցի բովանդակության մասին գիտական շրջանառության մեջ եղած տեսակետները բաժանվում են երեք հիմնական խմբի։

Հայկական հարցը համաձայն այդ տեսակետների՝

1. Ամբողջ Հայաստանի ազատագրության,հայ պետականության վերականգնման հարցն է։
2. Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցն է։
3. Արևմտահայության ֆիզիկական գոյության, կյանքի, գույքի ապահովության, Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցն է։

Յուրաքանչյուր ժողովրդի պահպանման ու ազատ զարգացման համար ամենանպաստավոր պայմանները ստեղծվում են միայն անկախ

Հայրենիքում,անկախ պետականության սահմաններում։Առանց Հայրենիքի և անկախ պետականության ոչ մի ժողովուրդ չի կարող հարատևել և դատապարտված է ոչնչացման։

Հայկական հարցը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն է։

Արևելյան հարցը Օսմանյան կայսրության թուլացման,թուրքերի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային անկախության համար մղված պայքարի և մեծ տերությունների մրցակցության ուժեղացումն է Թուրքիայի ժառանգությանը տիրելու համար։

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերը փայլուն հաղթանակի հասան։Պատերազմի արդյունքներն ամփոփվում են Սան-Ստեֆանոյի պայմանագրում։

Հայկական հարցը որպես միջազգային դիվանագիտության հարց,առաջին անգամ իր արտահայտությունն է գտել Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում։ Տարածքային առումով,առնչված միջազգային իրադրության հետ,Հայկական հարցը տարբեր ժամանակաշրջաններում պարունակել է ամբողջ Հայաստանի կամ էլ միայն Արևմտյան Հայաստանի անկախության պահանջը։

Դրանք անկախության պայքարի պատմության փուլերն են եղել։

Հայկական հարցի ծագման մասին գոյություն ունի երեք հիմանկան տեսակետ։Համաձայ այդ տեսակետների Հայկական հարցը՝

1. Հին է այնքան,որքան հայ ժողովուրդը։

2. Ծագել է հայ պետականության անկումից հետո։
3. Առաջացել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո առաջին անգամ իր արտահայտությունը գտնելով Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերում։

«Հայկական հարցը»Սան-Ստեֆանոյի պայմանագրում

Հարկ է իրարից սահմանազատել Հայկական հարցի և Օսմանյան բռնապետության լծից ազատագրվելու համար հայ ժողովրդի պայքարը։Եթե առաջինը,որպես միջազգային դիվանագիտության քննարկման առարկա,առաջացավ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով,ապա երկրորդը որպես հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հարց,գոյություն ուներ դրանից շատ վաղ[1]։

1878թ. փետրվարի 14-ին Ն. Իգնատևը և Նելիդովը ,Սան-Ստեֆանոյից,որտեղ տեղի էին ունենում պատերազմող կողմերի բանակցությունները,Ա. Մ. Գորչակովին հղած զեկուցագրում Սաֆվետ փաշայի բռնած դիրքի մասին հաղորդում են,որ թուրքերը հատկապես առարկում էին Բուլղարիան որպես ինքնուրույն պետություն ճանաչելու դեմ։Նրանց սարսափեցնում էր սլավոնական պետության գոյությունը Կոստանդնուպոլսի դարբասի մոտ։Ռուսները,սակայն ամենայն կրքոտությամբ պաշտպանում էին բուլղարական հարցը։Թուրքիան հույս ուներ,որ Անգլիան կօգնի խափանելու այդ առաջարկը[2]։

1877թ. ապրիլի 12-ին Ալեքսանդր 2-րդ կայսրը Քիշնևում ստորագրեց մանիֆեստը,և սկսվեց ռուս-թուրքական պատերազմը։Պատերազմը ծավալվում էր երկու ռազմաճակատներով՝ Բալկանյան և Կովկասյան։Ամբողջ Արևմտյան Հայաստանն ազատագրվեց սուլթանական բռնապետությունից։

1877թ. մայիսին ռուսական զորքերը գրոհով վերցնում են Արդահանը։Հոկտեմբերին Ալաջայի բարձունքներում ռուսները ջախջախիչ հարված հասցրին Մուխտար

---

[1] Պողոսյան Ա. ,Գոյատևման պայքարի քառուղիներում,Եր. ,1988,էջ 64։

[2] Ավետիսյան Ծ. ,Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմություն,Եր 1976,էջ 23։

փաշայի գլխավորած թուրքական զորքերին։Այս հաղթանակից հետո ռուսական զորքը հայ կամավորների մասնակցությամբ պաշարում է Կարսը,որի գրավումը հանձնարարվում է գեներալ Հովհաննես Լազարևին։Նոյեմբերի 6-ին թուրքերը հանձնվում են։Կարսի գրավումը Կովկասյան կորպուսի ամենախոշոր հաղթանակն էր։1878թ. փետրվարին ռուսական զորքերը մտնում են Կարին[3]:

Ռուսական բանակի տարած փայլուն հաղթանակի արդյունքը 1878թ. փետրվարի 19-ի (մարտի 3) Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրն էր,որում

16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում ռեֆորմների իրագործմանը։ Իգնատևը պայմանագրի մեջ 16-րդ հոդվածը մտցնելը դիտում էր որպես ռուսական դիվանագիտության հաղթանակ և շատ գոհ էր,քանի որ ցարական կառավարությանն իրավական հիմք էր տալիս անընդմեջ միջամտելու Թուրքիայի ներքին գործերին,ուժեղացնելու Կ. Պոլսի ռուսական դեսպանի ազդեցությունը և մեծացնելու Ռուսաստանի հեղինակությունը Հայաստանում։ Իգնատևը կրիվ չարդարացրեց հայ ժողովրդի հույսերը,այնուամենայնիվ,16-րդ հոդվածը որոշակի երաշխիք էր ռեֆորմների իրագործման,մուսուլմանական ֆանատիկների կողմից հայերին հալածանքներից ու վրիժառությունից պաշտպանելու ուղղությամբ,մանավանդ որ խնդիր էր դրված «անհապաղ կենսագործել» բարենորոգումները և ռուսական զորքերը պահել հայկական վիլայեթներում մինչև ռեֆորմների իրագործումը,քաջ գիտենալով սուլթանի մեծ խոստում տալու և արագ «մոռանալու», անգամ փոքրը չկատարելու քաղաքականությունը։

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը հեռու էր հայերի ձգտումներն ու ցանկություններն արտահայտելուց։Սակայն պատմական տվյալ պայմաններում,դա նրանց համար նպաստավոր մի հոդված էր։Թեկուզ այն,որ այդ պայմանագրով թուրքական կառավարությունը պարտավորվում էր մինչև ռուսական զորքերի հեռանալը Հայաստանում տեղական պահանջներից բխող ռեֆորմներ անցկացնել և հայերի անվտանգությունը պաշտպանել,անկասկած,դրական նշանակություն կունենար և որոշ չափով կթեթևացներ նրանց ծանր վիճակը։Բայց 16-րդ հոդվածը մնաց թղթի վրա և չիրագործվեց,որովհետև շուտ գումարվեց Բեռլինի կոնգրեսը և Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերափոխվեց։

Այսպիսով, Սան Ստեֆանոյի պայմանագրով Կարսի, Արդահանի, Բաթումի, Բայազետի և մինչև Սողանլուղ ընկած տերիտորիայի հայերը միացվելու էին արևելահայերին,իսկ Թուրքիայում մնացող հայերի համար խոստացան ապահովել անձի անվտանգություն,գույքի անձեռնմխելիություն՝ տեղական պահանջներից բխող ռեֆորմների իրագործում։Բացի այդ,առաջին անգամ հայկական հարցը բարձրացավ միջազգային դիվանագիտության ասպարեզ,և սուլթանական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց նրա գոյությունը։

[3] Դանիել յան Է. ,Մել քոնյ ան Ա. ,(հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը),Եր. ,2008,էջ 237:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածի համաձայն Թուրքական կառավարությունը պետք է Ռուսաստանին վճարեր 1. 400 միլիոն ռուբլի կոնտրիբուցիա[4]:

Բացի 16-րդ հոդվածից, Հայկական հարցին էր վերաբերում նաև պայմանագրի 25 և 27-րդ հոդվածները:

Պայմանագրի 25-րդ հոդվածը վերաբերում է ռուսական զորքերի ետ քաշմանը Արևմտյան Հայաստանից,այն է «Ասիական Թուրքիայի մաքրումը ռուսական զորքից տեղի կունենա վեց ամսվա ընթացքում,վերջնական հաշտությունը կնքելուց հետո»:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 27-րդ հոդվածի համաձայն,Թուրքական կառավարությունը իրավունք չուներ պատժելու և հետապնդելու այն անձավորություններին,որոնք պատերազմի ժամանակ օգնել էին ռուսական բանակին և նպաստել նրա հաղթանակի գործին:Դա առանձնապես կարևոր նշանակություն ուներ հայերի համար,որովհետև սլավոնական ժողովուրդները արդեն ձեռք էին բերել իրենց անկախությունը ռուս ժողովրդի եղբայրական օգնության շնորհիվ,իսկ հայերը դեռևս շարունակելու էին մնալ թուրքական բռնակալության տակ և հարկավոր էր այդ հաշվի առնել:Դրա համար պայմանագրի այդ հոդվածում նախատեսված է եղել.

Պայծառափայլ Դուռը պարտավորություն է վերցնում ոչ մի կերպ չհետապնդել և թույլ չտալ հետապնդելու թյուրքահպատակներին,որոնք պատերազմի ժամանակ

հարաբերություն են ունեցել ռուսական բանակի հետ»:

Թուրքիան փաստորեն դուրս էր վռնդվում Բալկանյան թերակղզուց,Բաթումից և Արևմտյան Հայսատնի մի զգալի մասից,որ անշուշտ ուներ առաջադիմական նշանակություն,և որոնց համար «. . . Ռուս ժողովուրդը կորցրել է մոտավորապես

200. 000 մարդ. . . »:

Ռուսաստանը հետագայում հրաժարվում է իր մտադրություններից Արևմտյան Հայաստանի նկատմամբ:Ռուսաստանի այդ պահանջի իրագործումը հանդիպում է նաև Անգլիայի համառ դիմադրությանը:Արևմտյան Հայաստանի ինքնավարության ստեղծումը նշանակում է Ռուսաստանի ազդեցության տարածումը ամբողջ Մերձավոր Արևելքի և Տրապիզոնից Իրանի վրայով դեպի Հնդկաստան տանող առևտրական ճանապարհի վրա ու ներթափանցել Հնդկաստան:Այդ պատճառով էլ անգլիական դիվանագիտությունը բոլոր միջոցները գործադրում էր Ռուսաստանին արևմտյան Հայաստանից դուրս մղելու և իր ազդեցությունը այնտեղ ամրապնդելու համար:Այդ պատճառով էլ Անգլիան համառ դիմադրում էր Ռուսաստանին Արևմտյան Հայաստանի հարցում:Իսկ Ռուսաստանը,որը շատ էր թուլացել Ղրիմի

---

[4] Բադալյան Խ,Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում
,Եր.,1955,էջ 78:

կամպանիայի և այնուհետև ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմի ժամանակ,ի վիճակի չէր դիմադրելու եվրոպական տերությունների ճնշումներին ու սպառնալիքներին և ստիպված է լինում Արևմտյան Հայաստանի հարցում տեղի տալ։

Միջազգային դիվանագիտության մեջ անվանապես մուտք գործեց Հայկական հարցը, որը հետագայում այնքան հոգսեր պատճառեց անպաշտպան արևմտահայությանը հատկապես դրան հաջորդող վերջին հիսուն տարիների ընթացքում։

Սան-Ստեֆանոյի որոշումներից դժգոհ էին բոլոր կողմերը։Թուրքիան դժգոհ էր,քանի որ կորցնելով եվրոպական մարզերն ու աֆրիկյան տիրույթները,միտք ուներ ամրանալու Փոքր Ասիայում,հենվելով մահմեդաբնակ ազգերի վրա,ծնունդ տալով թուրանական նոր պետության։Համիդն իր արտգործնախարար,մահմեդականացած հույն Կարաթեոդոր փաշայի բերանով եվրոպական մեծերից օգնություն էր աղերսում նույնիսկ փաստաթղթի ստորագրումից հետո։

Անգլիան գոհ չէր,որովհետև Ռուսաստանի ամրանալը Անդրկովկասում ուղղակի սպառնալիքներ էր ստեղծում ոչ միայն Փոքփ Ասիայի,այլև բրիտանական թագուհու թագի մարգարիտ հանդիսացող Հնդկաստանի զավթմանը։Լոնդոնի կաբինետը նոր բիիստերիայով դիմեց Ավստրո-Հունգարիային՝ նրան խոստանալով Բոսնիան և Հերցեգովինիան,Ֆրանսիային «տալով» Ալժիրն ու Թունիսը,Օտտո Բիսմարկին առաջարկելով տնտեսական գոտիների բաժանել Թուրքիան և մեծ բաժին հատկացնել Եվրոպայի քարտեզի վրա մի քանի տարի առաջ միավորված տեսքով հայտնված կայզերական Գերմանիային։

Անգլիան Եվրոպան միավորեց Ռուսաստանի դեմ,և պահանջ առաջացավ ՍանՍտեֆանոյի դաշնագիրը վերանայել Բեռլինում այն տերությունների մասնակցությամբ,որոնք ստորագրել էին Փարիզի խաղաղության պայմանագրի տակ։

Ռուսաստանը ևս դժգոհ էր։Ռուսական զորքերը ծով արյուն էին թափել Շիպկայի և Պլևնայի պատերի տակ,Բայազետի մատույցներում,Կարսի բերդ-ամրոցի գրավման պահին։Նրանք հաղթանակ էին տարել օսմանյան կայսրության դեմ մղած հերոսական պատերազմում ,սակայն այժմ իրենց դեմ հանդիման կանգնած էր Բրիտանական ծովագայլը համաեվրոպական պատերազմի սպառնալիքով։

Հայ ժողովուրդը սկզբում,իր ընտրանու արտահայտությամբ,ցնծության մեջ էր։Կեսհազարամյա պատմության ընթացքում Թուրքիան դիվանագիտական փաստաթղթերում առաջին անգամ ճանաչում և արձանագրում էր«Հայաստան բառը,խոստանում,նույնիսկ պարտավորվում բարեփոխումներ մտցնել այդ երկրում։

Հայերի ինքնավարություն տալու ճարպիկ խաղը ձևավորվել էր Լոնդոնի կաբինետում,հանձնարարվել Կ. Պոլսի անգլիական դեսպան Առուստեն Հենրի Լեյարդին՝ ոչ միայն բացատրել ու համոզել Համիդ 2-րդին թակարդի հետագա ընթացքը,այլև Ն. Վարժապետյանի այդ ուղղությամբ կատարվելիք քայլերին ազատություն տալ։Բայց ոչ բոլոր հայերն էին ռոմատիկ կամ միամիտ։ Արմատական թևի պատկանող,հայատառ թուրքերեն «Մյունատի»,հետո«Թերճիման Էֆքյար»

պարբերականի խմբագիր Կարապետ Փանոսյանը Ազգային ժողովի բեմ է բարձրանում և զայրացած ասում. «Ի՞նչ եք անում,ու՞ր եք տանում ազգը,սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ. . . ո՞վ կտա մեզ ինքնավարություն,ո՞րի վրան եք դնում ձեր հույսը։Այն շահամոլ և նենգ Եվրոպայի վրա,որն ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունն իր շահադիտական նպատակների համար»։

Լոնդոնն ու Ստամբուլը, ձեռք ձեռքի տված, բոլոր հնարները գործադրում էին խաբելու հայ ժողովրդին, նրան ուղղելու ինքնավարություն ատանալու ճանապարհին, իրականում խաթարելու հայ-ռուսական ջերմ հարաբերությունները,Բեռլինում վերանայել տալու տարածքային կետերը,ամենակարևորը՝ փոխելու 16-րդ հոդվածի ձևն ու բովանդակությունը։Հայերի ինքնավարության ծրագրին ծանոթ էր սուլթան Համիդը։Նրա գիտությամբ և թույլտվությամբ էր Բեռլին մեկնում հայկական պատվիրակությունը։

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանգրի ստորագրումից անցան օրեր,ամիսներ,բայց այն վերջնական իրավական ճանաչում չէր ստանում։Ռուս-թուրքական հաշտության պայմանների շուրջ ծավալվեց նրբին ու բարդ դիվանագիտական պայքար,որի հիմնական բովանդակությունն արևմտաեվրոպական տերությունների ջանքերն էին՝ ուղղված Բալկաններում և Հայաստանում ռուսական զենքի հաղթանակի նսեմացման,Օսմանյան կայսրության ժառանգությունից իրենց համար առավելագույնս օգուտ քաղելու նպատակով։

Մեծ տերություններից յուրաքանչյուրը մտածում և գործում էր իր շահերին համապատասխան։ Իհարկե,տարօրինակ կլիներ,որ Արևելքի գաղութացման համար պայքարող առաջատար կապիտալիստական տերություններն իրենց շահերին հակառակ իրապես մտահոգվեին թուրքական լծից հայերին ազատագրելու կամ նրանց վիճակը բարելավելու խնդրով[5]։

Թուրքերը ոչ միայն իրենք չստեղծեցին,այլև անտիկ քաղաքակրթությունից ոչինչ չսովորեցին։Չսովորեցին,որովհետև այդ քաղաքակրթությունը խանգարում էր նրանց վաչկատուն ապրելակերպին։Նրանք ճարտարապետական-մահմեդական հուշարձաններ ստեղծելու փոխարեն գերադասեցին եղած քրիստոնեական հուշարձանները, լավագույն դեպքում,դարձնելով մզկիթներ։

Ինչպես նշված է «Հայ ժողովրդի պատմություն 6-րդ հատորում, «Ոչ սուլթանական Թուրքիան,ոչ գաղութատիրական երկրները և ոչ էլ ցարական Ռուսաստանը հայ ժողովրդին ինքնավարություն կամ անկախություն տալու որևէ ցանկություն չունեին։Մեծ տերությունների կողմից տարբեր առիթներով առաջ քաշված կամ պաշտպանված Հայաստանի ինքնավարության պահանջը այս կամ այն նպատակ հետապնդող խաղ է եղել միայն[6]։

Հոդված 16.Նկատի առնելով այն,որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ

---

[5] Կիրակոսյան Զ. ,Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.),Եր. ,1978,էջ
[6] Ազատյան Հ. ,Բախտորոշ պայմանագրեր,Եր. ,2002,էջ7։

առիթ տալ բախումների և բարդությունների,որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենա վնասակար ազդեցություն,Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական

կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ,և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից։

Հոդված 17. Բարձր Դուռը լիակատար և անվերապահ ներում է պարգևում այն բոլոր օսմանահպատակներին,որոնք մասնակից են եղել վերջին իրադարձություններին,և բոլոր այն անձինք,ովքեր դրա հետևանքով ենթարկվել են բանտարկության կամ տարագրության,անհապաղ կազատվեն։

Հոդված 27. Բարձր դուռը պարտավորվում է,որ չի հալածի և թույլ չի տա հալածել այն թուրքահպատակներին,որոնք պատերազմի ժամանակ կապեր են ունեցել ռուսական բանակի հետ,եթե պատահի,որ որոշ անձինք իրենց ընտանիքներով հանդերձ ցանկանան հեռանալ,ռուս զորքերի հետևից,օսմանյան իշխանություններն այդ բանին չեն ընդդիմադրի։

Հոդված 28. Հաշտության նախնական պայմանագրի վավերացումից անմիջապես հետո ռազմագերիները փոխադարձաբար կվերադարձվեն այս ու այն կողմի նշանակված հատուկ կոմիսարների միջնորդությամբ,որոնք այդ նպատակով կմեկնեն Օդեսա և Սևաստոպոլ։Օսմանյան կառավարությունը տասնութ համահավասար ժամկետներում,վեց ամսվա ընթացքում վերոհիշյալ կոմիսարների կազմած հաշիվների համաձայն,կվճարի ռազմագերիների պահպանման ծախսերի,իսկ ռազմագերիները կվերադարձվեն այդ կառավարությանը։

Հոդված 29. Սույն ակտը կվավերացվի Նորին կայսերական մեծություններ Ամենայն ռուսաց կայսրի և օսմանների կայսրի կողմից,և վավերացումները կփոխանակվեն տասնհինգօրյա ժամանկամիջոցում կամ ավելի շուտ,եթե դա հնարավոր է,Ս.Պետերբուրգում,որտեղ կկայանա նաև փոխադարձ համաձայնություն այն վայրի և ժամանակի վերաբերյալ,որտեղ և երբ սույն ակտի պայմանները կկերպավորվեն հաշտության պայմանագրի համար սովորական հանդիսավոր ձևով։

Ի վավերացումն,որի երկկողմանի լիազորներն ստորագրեցին սույն ակտը և կնքեցին այն։

Սան-Ստեֆանոյում,1878 թվականի փետրվարի 19-ին (մարտի 3-ին)։ Ստորագրեցին՝

- Կոմս Ն.Իգնատև
- Սաֆվետ
- Նելիդով
- Սադուլլահ

Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում

1878թ.գարնանը անգլո-ռուսական պատերազմը գրեթե իրողություն էր։Ալեքսանդր 2-րդը համոզված էր,որ Անգլիան Ռուսաստանին պատերազմ հայտարարելու պատրվակ էր փնտրում։

Շուվալովին կոնգրես ճանապարհելիս՝ նա հոխորտաց. «Կոմս Շուվալով.հիշեք, խաղաղության համար գլխով պատասխան եք տալու ինձ»։

Ցարական կառավարությունը դիմեց Բիսմարկին. «...հրավիրել կոնգրես այն հաշվով,որ Ռուսաստանը ազատվի երկընտրանքից՝ պատերազմել Անգլիայի և Ավստրիայի դեմ կամ անվերապահ նահանջել»։

Դիզրայելին հայտարարեց,թե հարկ է հայկական նահանգները դարձնել ռազմական ամրություններ,դրանցում կենտրոնացնել թուրքական զորքեր Ռուսաստանի դեմ։

«Անգլիան ի զորու չէ Թուրքիային ստիպել բարենորոգումներ իրականացնել։Նա չի կարող վախեցնել Թուրքիային,թե այլևս նրան չի հովանավորի,քանի որ թուրքերը գիտեն,որ Անգլիան հովանավորում է սեփական շահերից ելնելով..Եթե Անգլիան հակառակ իր ավանդական քաղաքականության,Թուրքիային հակադրի բարեփոխումներ կատարել,ապա թուրքերն անպայման ընդդիմանալու են ու միաժամանակ մերձենալու են Ռուսաստանին»։

Անգլիային հաջողվեց մինչև գագաթնաժողովի սկսվելը որոշել քննարկվելիք հարցերի ցուցակը և դրանց լուծման ամենահավանական տարբերակները։Դեռ ավելին, Բեռլինի վեհաժողովը դաշնագրային օրինականության տեսք էր տալու Անգլիայի կողմից մինչ այդ կայացրած վճիռներին։

Պահանջելով բարենորոգումներ՝ Անգլիան չէր ելնում օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների շահերից,այլ բարենորոգումների վրա

վերահսկողությունը նրա համար զենք էր ցանկացած պահի Թուրքիային իր կամքը թելադրելու համար։

Գագաթաժողովի քննարկած հարցերի շրջանակները շատ լայն էին։Խնդրի էր դրված Արևելյան հարցն ամբողջությամբ վերաքննել նոր իրողություններին համապատասխան,նաև վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը և այդ անել՝ ելնելով ոչ թե պատերազմում այս կամ այն կողմի խաղացած դերից ու վիճակից,այլ հիմք ընդունելով վեհաժողովին մասնակցող բոլոր երկրների տնտեսական, քաղաքական և ռազմական շահերը։

Բեռլինում գլխավոր հակամարտությունը Անգլիայի և Ռուսաստանի մեջ էր։ Դիզրայեին հոխորտաց.«Մենք Անգլիայից եկել ենք այստեղ կարգավորելու սուլթանի գործերը և նրան լիակատար հնարավորություն տալու իր իշխանությունը գործադրելու

Թուրքիայում»։

Պոլսահայ գաղութը Բեռլինի վեհաժողովը դիմավորեց բուռն քննարկումներվու բանավեճերով և չէր կարողանում ընդհանուր կարծիք մշակել,որն ազդեցություն գտավ նաև կոնգրեսին մասնակցելու համար ձևավորված կազմի մեջ։Պատվիրակության երեք անդամներից Մ.Չերազըմոլի անգլոֆիլ էր,Նար Պեյը (Խորեն Գալֆայան)ռուսաֆիլ,իսկ Մ.Խրիմյանը հայտարարում էր,թե ինքն այն տերության կողմն է,ով կլուծի «մեր հարցը»,սակայն չէր հարում նրանց,ովքեր դնում էին Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմից դուրս բերելու հարցը։

Հայացքների այս խայտաբղետությունը բացասական լուրջ ազդեցություն ունեցավ պատվիրակության գործունեության վրա,վեճերն ու աղմուկը շատ ժամանակ էին խլում։Պատվիրակույան անդամներին միմյանց հետ հաշտեցնելու համար պատրիարքը Բեռլին ուղարկեց չորրորդ գործչին՝Ստ.Փափազյանին։Բեռլինում օսմանյան դեսպանատանը ծաղրեցին .Խրիմյանը թուրքաֆիլ,Չերազը՝ անգլոֆիլ,Նար Պեյը՝ ռուսաֆիլ,իսկ Փափազյանը՝ հաշտարար,-ահա հայոց պատվիրակությունը։

Սակայն հայկական շրջաններում տիրապետողը Անգլիայի օգնությամբ Հայկական հարցը լուծելու կարծիքն էր։

Բեռլինում գլխավոր հակամարտ ուժերը Անգլիան ու Ռուսաստանն էին։Թուրքիայի և Ռուսաստանի միջև պատերազմը դեռ շարունակվում էր,երբ Անգլիան աշխարհով մեկ բարձրացրեց,թե գրավելով Հայաստանը,Ռուսաստանը փակում է Անգլիայի առևտրական ճանապարհները։Դիզրայելին պահանջեց Ռուսաստանին դադարեցնել հարձակողական գործողությունները,այլապես նա պատերազմի մեջ 300 հազարանոց բանակ կմտցնի։

Վիկտորյա թագուհին նույնիսկ հայտարարեց. «Որքան կուզենայի տղամարդ լինել և ռուսների դեմ կռվել»։Դիզրայելին փառաբանում էր թուրքերի բարեմասնությունները,նա տանը ֆես էր կրում։

Ռուսական պատվիրակությունը ղեկավարում էր արտաքին գորխերի մինիստր ծերուկ Ա. Գորչակովը,կազմում էր կոմս Շուվալովը։

Անգլիայի առաջարկները վեհաժողովում խիստ հակառուսական էին և ի չիք էին դարձնում ռուսական զենքի հաղթանակները։Երբ Բիսմարկը Դիզրայելին հարցրեց՝ նրա առաջարկները վերջնագի՞ր են,ապա վերջինս պատասխանեց. «Անտարակույս»,և եթե դրանք չընդունվեն,Անգլիան պատերազմ է սկսելու։

Եվրոպական հեղինակներից մեկը Բեռլինի կոնգրեսն անվանել է «օձաձկների ժողով»։Ոչ միայն Անգլիայի,այլև վեհաժողովի մասնակից մյուս պետությունների ներկայացուցիչները մարդասիրական նպատակների,փոքր ու ճնշված ժողովուրդների շահերը պաշտպանելու մասին ճառեր ասելու և խոստումներ տալու գործում չէին զլանում,իսկ գործնականում զբաղված էին իրենց պետությունների գաղութատիրական-եսասիրական շահերն առաջ տանելով։

Բեռլինում կատարվեց պատմության մեջ հազվադեպ պատահող բան,երբ պատերազմող ազգերի աթոռները զբաղեցրին պատերազմին որևէ մասնակցություն չունեցողները,որոնց բաժին հասան «կարկանդակի»ամենամեծ կտորները։

Լորիս Մելիքովը խորհուրդ էր տալիս համագործակցված աշխատել ռուսական պատվիրակության հետ։Մելքոն խանն անգլիասեր էր,և շատ գոհ մնաց,որ հայկական բարենորոգումների վրա վերահսկողությունը գործնականում իրականացնելու էր Անգլիան։Նուբար փաշան թուրքական կողմնորոշում ուներ և Հայաստանի վաղվա օրը տեսնում էր Թուրքիայի կազմում։

Փոքր ժողովուրդների ներկայացուցիչներին,այդ թվում հայկական պատվիրակությանը,թույլ չտվեցին մասնակցել կոնգերսի նույնիսկ այն նիստերին,որոնցում քննարկվում էր տվյալ ժողովրդին վերաբերող հարցը։Խրիմյանը դառնությամբ բացականչեց. «Եվրոպացիները մեզ մարդ չհաշվեցին»։Հայկական պատվիրակության ներկայացրած փաստաթուղթը կոնգերսի կողմից ուշադրության չարժանացավ։

Ռուսական զենքի հաղթանակի արդյունքն ի վերջո եղավ այն,որ ԱվստրոՀունգարիան ստացավ 1093 քառ. միլ,Անգլիան՝ Կիպրոսը,իսկ Ռուսաստանը ընդամենը՝ 636 քառ.միլ։

Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում քննեցին հուլիսի 4,6 և 8-ին։Հայոց պատգամավորությանը չթույլատրեցին մասնակցել քննարկմանը։Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի դեմ առաջինը դեմ արտահայտվեց Սոլսբերին։Նա երկերեսանիորեն հայտարարեց,որ կողմ է հայկական հարցի լուծմանը,բայց պահանջում է ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից հանել մինչև բարենորոգումների անցկացնելը,որը նշանակում է վերացնել ռեֆորմների իրագործման նյութական երաշխիքը։

Թուրքիայի ներկայացուցիչ Կարաթեոդոր փաշայի առաջարկը՝ 16-րդ հոդվածի վերջում ավելացնել՝ Բ.Դուռը պարտավորվում է Արևմտյան Հայաստանում ռեֆորմների անցկացման ուղղությամբ ձեռնարկած միջոցառումների մասին սիստեմատիկ հաղորդել մեծ տերություններին,նպատակ ուներ հայկական բարենորոգումների հսկողությունը Ռուսաստանի փոխարեն դնել եվրոպական վեց տերությունների վրա,որպեսզի նրանք իրար մեջ ունեցած հակասությունների հետևանքով ի վիճակի չլինեն իրագործել այն։

Բեռլինի միջազգային կոնգրեսը քննարկում է նաև Բալկանյան թերակղզու մյուս ժողովուրդների հարցը։

Ռումինական իշխանությունը ճանաչվում է որպես անկախ պետություն,որ նախապես որոշված էր Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով։

Անգլիական դիվանագիտության գործարքները վճռական դեր խաղացին Բեռլինի կոնգրեսում և ճակատագրական նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար։Բեռլինի վեհաժողովում այդ հոդվածը փոփոխվեց 61-րդի,որով նույնպես

Բ.Դուռը պարտավորվում էր հայկական շրջաններում բարենորոգումներ անցկացնել,երաշխավերոլ հայերի ապահովությունը և պարբերաբար զեկուցել մեծ տերություններին։16-րդ և 61-րդ հոդվածները բովանդակությամբ կարծես թե նման էին իրար։Սակայն առաջին դեպքում բարենորոգումները պետք է անցկացվեին մինչև ռուսական զորքերի Հայաստանի տերիտորիաներից դուրս գալը,երկրորդում այդ պայմանը դուրս էր նետված։Սոլսբերին ամեն ինչ արեց,որ ռուսական զորքերի դուրսբերումը Հայաստանի տերիտորիաներից չկապվի բարենորոգումներ անցկացնելու հարցի հետ։Ըստ 61-րդ հոդվածի,Թուրքիան իր կատարելիք բարենորոգումների մասին պետք է սիստեմատիկաբար զեկուցեր մեծ տերություններին և ոչ միայն Ռուսաստանին,ինչպես նախատեսված էր 16-րդ հոդվածում։Թուրքիան ոչ մի երաշխիք չէր տալիս նախատեսվող բարենորոգումների իրականացման համար։Հայկական հարցը խլվեց Ռուսաստանի ձեռքից և անորոշության գիրկը նետվեց։
Անգլիական շահամոլ դիվանագիտությունը կարողացավ տապալել «մեծ Բուլղարիայի»ծրագիրը և 16-րդ հոդվածով նախատեսվող հայկական բարենորոգումների ռուսական պահանջները։

«Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա,խոստովանում է Լ.Ջորջը,-Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 թթ. ,1909թ.սոսկալի ջարդերին և 1915թ.ամենասարսափելի կոտորածին»։

Այսպես էր «լուծվում»Հայկական հարցը։

Խրմյանն իր էությամբ դյուրահավատ մարդ էր և գտնվում էր անգլիական դիվանագիտության ազդեցության տակ։Նա եվրոպական որևէ լոզու չգիտեր,երբ նրան հարցրին,թե ինչ լեզվով պիտի բացատրվի եվրոպական դիվանագետներին,նա ասաց. «Պիտի խօսեմ լեզու մը,որ համաշխարհային է և միևնույն ժամանակ,այսինքն՝ պիտի լամ»։

Խրիմյանը գրեց. «Այս քաղաքակիրթ աշխարհիս մեջ մարդագելեր պիտի ուտեն Թուրքաստանի մեծ կտոր միսերը,զրկյալ հայուն գեթ կտորիկ մի ոսկոր պիտի թողու՞ն»։Դրանով իսկ նա հաստատում էր Բիսմարկի հռչակած թեզը՝ «Իրավունքը հզորինն է»։

Բեռլինից հուսահատված և հուսախաբված վերադառնալուց առաջ Խրիմյանի պատվիրակությունը իր բողոքն է ուղարկում կոնգրեսի նախագահ Բիսմարկին. «Հայերն այժմ կսովորեն թե իրենք խաբված են,թե որովհետև իրենք եղել են խաղաղասեր,իրենց իրավունքները չեն ճանաչվել ըև թե իրենք ոչինչ չեն ձեռք բերել պահպանելու համար իրենց հնադարյան եկեղեցու և իրենց հնադարյան ազգայնության անկախությունը»։

Ակնկալվելիք բարենորոգումների փախարեն առավել սրվեցինն առանց այն էլ սրված ազգամիջյան հարաբերությունները,հայկական հարցին հակադրեցին քրդականը,հրահրեցին քուրդ ռազմական ավագանուն՝ վրեժխնդիր լինել անզեն հայ

ժողովրդից,որպես հատուցում Բեռլինի դաշնագրի «քրդերից ու չերքեզներից հայերին պաշտպանելու»61-րդ հոդվածի[7]։Իրավացի էր Խրիմյանը,որ գրում էր. «Այլևս կասկած չկա,որ քրդական միություն է կազմակերպվում կառավարության դրդումով,որը ուզում է անդամալուծել հայոց հարցը,դրան հակադրելով մի նոր հարց՝ քրդականը։Այս միության ոգին Օսմանյան քաղաքականությունն է:

Ինչ վերաբերում է հայերին,ապա նրանք շատ ուշ հասկացան,որ կապիտալիստական Եվրոպայի պարագլուխները Բեռլինում հավաքվել էին ոչ թե լուծելու փոքր ժողովուրդների ճակատագիրը,այլ սովորական միջազգային գործարքներ կնքելու՝ առանց ժողովուրդների կամքի հետ հաշվի նստելու և ընդդեմ ժողովուրդների կենսական շահերի։Այդպիսին է բուրժուական դիվանագիտության բուն էությունը։Այն իր էությամբ անկարող է և երբեք չի ձգտել արդարացիորեն լուծելու փոքր,և ոչ միայն փոքր,ժողովուրդների կենսական հարցերը։

Բեռլինի կոնգրեսը դիվանագիտական «լկտի կոմեդիա»էր։Այն նպատակ ուներ առաջավոր մարդկության ուշադրությունը շեղել և մոլորեցնել։Կոնգրեսի որոշումներն ունեն աղաղակող անարդարացի բնույթ։Կողոպտվեց Թուրքիան։Օսմանյան կայրության հողերը զավթեցին Անգլիան ու Ավստրո-Հունգարիան։Թուրքիայի ստրկական տիրապետության տակ վերադարձրին բուլղարներին և արևմտահայերին,նրանց դատապարտելով ֆիզիկական բնաջնջման ու բռնի ասիմիլացիայի։Ահա քաղաքակիրթ Եվրոպայի մեծ տերությունների ղեկավարների ողորմածությամբ արևելյան հարցի «հումանիստական»սկզբունքով լուծման պատկերը։Կոնգրեսի աշխատանքները հանրագումարի բերելուց հետո պատմաբանները գրել են. «Պատմության մեջ քիչ կգտնվեն այդպիսի ահավոր և անարդարացի որոշումներ։

Թեման դասավանդել եմ 11-րդ դասարանում։Կիրառել եմ Վեննի դիագրամ և T-աձև աղյուսակ մեթոդները։Բավականին արդյունավետ մեթոդներ են այս թեմայի համար։Վեննի դիագրամով աշակերտները հստակ կարողացան պատկերացում կազմել թե պայմանագրի ,թե կոնգրեսի մասին,ակնհայտորեն նշելով նրանց նմանություններն ու տարբերությունները։Ցավոք սրտի ,երկու իրադարձությունների կենտրոնում էլ մենք հանդես եկանք որպես խաբված ժողովուրդ և չկարողացանք դասեր քաղել ապագայի համար։Եղանք խաղաքարտ,իսկ մեր ապագան վճռվեց առանց մեր մասնակցության . . .

[7] Կոստանդյան Է. ,Այրսիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությունը,Եր. ,2000,էջ280:

Եզրակացություն

Հայ ժողովրդի ազգային ձգտումը՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական օգնությամբ բալկանյան ժողովուրդների նման թոթափել սուլթանիզմի բարբարոսական լուծը, փրկվել ֆիզիկական բնաջնջումից ու բռնի ասիմիլացիայից, կանգնել ազգային ազատագրության ու սոցիալական առաջադիմության ուղու վրա, հանդիպում էր ոչ միայն բռնակալական Թուրքիայի,այլ նաև եվրոպական խոշոր պետությունների, առաջին հերթին Անգլիայի ուժեղ դիմադրությանը: Եթե ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը համընկնում էր թուրքական տիրապետության դեմ պայքարող հայ ժողովրդի ազգային շահերին,ապա այն լրիվ հակասում էր անգլիական խոշոր բուրժուազիայի էքսպանսիոնական ձգտումներին,որովհետև վերջինս վաղուց էր երազում հաստատել իր միանձյնա տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը Օսմանյան կայսրությունում:Եթե սլավոնաֆիլների պարագլուխ Ի.Ակսակովը գտնում էր,որ «Ռուսաստանն իրավունք ունի նվաճելու Կ.Պոլիսը,որովհետև նեղուցների ազատությունը նրա համար ունի կենսական նշանակություն» ապա բուրժուական Անգլիան «պաշտպանում էր :

Շատ ժողովուրդներ զրկված անկախ պետականություն ստեղծելու հնարավորությունից՝ պատմության ելևէջներում հարկադրված են եղել որպես ժամանակավոր հանգրվաններ,գնալ կոմպրոմիսային տարբերակների:Հայաստանը գտնվելով Թուրքիայի,Պարսկաստանի և Ռուսաստանի նվաճողական քաղաքականության խաչաձևման կենտրոնում, հայ ժողովուրդը և նրա ազատագրական պայքարի ղեկավարները դիմեցին հիմնահարցի լուծման մի ծրագրի կենսագործման,որը պատմության մեջ մտել է «Չարյաց փոքրագույնը» անունով: Եթե արտաքին և ներքին անբարենպաստ պայմանների պատճառով պատմության տվյալ փուլում հնարավոր չէ հասնել անկախ հայկական պետականության ստեղծմանը,ապա պետք է ընտրել Ռուսաստանը,որպես Չարիքների փոքրագույնը:Թուրքիայում դրված էր հայության ֆիզիկական ոչնչացման հարցը,Պարսկաստանում հայրեը գոյատևման,ազգային համախմբման և զարգացման բարենպաստ պայմաններ և հնարավորություններ չունեին:

Ամբողջ հայ ժողովուրդը միակամորեն ընդունեց ռուսական տիրապետությունը,որովհետև դրա մեջ էր հայ ժողովրդի փրկության,գոյատևման միակ ելքը:Պատմական վճիռը կայացնելիս նկատի էր առնվում այն հանգամանքը,որ ցարական Ռուսաստանը գաղութային կայսրություն է իր բոլոր բացասական հետևանքներով:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ազատյան Հ.,Բախտորոշ պայմանագրեր,Եր.,2002:
2. Աղայան Ծ.,Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից,Եր.,1976:
3. Բաղալյան Խ.,Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878,Եր.,1955:
4. Դանիելյան Է.,Մելքոնյան Ա.,(հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը),Եր.,2008
5. Կիրակոսյան Ջ.,Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը ,Եր.1978
6. Կոստանդյան Է.,Մկրտիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությունը,Եր.,2000
7. Պողոսյան Ս.,Գոյատևման պայքարի քառուղիներում,Եր.,1988: